ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ, ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՈՐԱԿՆԵՐԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՎԵՐՀԱՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԳԱՎԱՌ 2024

Հարցումը և արդյունքների վերլուծությունը կատարվել է ԳՊՀ որակի ապահովման բաժնի կողմից 2024թ. հունիսի 2-ին։

Որակի ապահովման բաժնի վարիչի ժ/պ՝ Հայրապետյան Ք.

մասնագետներ՝ Նախրատյան Մ.,

Մուրադյան Ն.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Հարցման ընդհանուր նկարագիրը……3
2. Հարցման մեթոդաբանությունը……4
3. Հանրակրթական դպրոցների ուսուցիչների մասնագիտական, մանկավարժական որակների բարձրացման ուղղությամբ կարիքների վերհանում……5
4. Եզրակացություններ և առաջարկություններ……10

I. Հարցման ընդհանուր նկարագիրը.

Գավառի պետական համալսարանի (այսուհետ՝ նաև ԳՊՀ, Համալսարան) որակի ապահովման բաժնի կողմից հանրակրթական դպրոցների ուսուցիչների մասնագիտական, մանկավարժական որակների բարձրացման ուղղությամբ կարիքների վերհանման նպատակով իրականացվել է հարցում: Հարցման նպատակն է ուսումնասիրել, գնահատել, վերլուծել ուսուցիչների կարիքները և դրանք հաշվի առնելով՝ կազմակերպել մասնագիտական, հոգեբանամանկավարժական թեմաներով վերապատրաստման դասընթացներ:

II. Հարցման մեթոդաբանությունը.

Հարցումն իրականացվել է GOOGLE FORMS առցանց (online) անանուն հարցաթերթիկի միջոցով: Հարցաթերթը բաղկացած է փակ, բաց, կիսաբաց հարցերից, որոնք մշակվել և կազմվել են ԳՊՀ որակի ապահովման բաժնի աշխատակիցների և ԳՊՀ դասախոսների համատեղ աշխատանքի արդյունքում: Հարցաթերթի նպատակն է որակական և քանակական տվյալների հավաքագրումն ու վերլուծությունը:

III. Հանրակրթական դպրոցների ուսուցիչների մասնագիտական, մանկավարժական որակների բարձրացման ուղղությամբ կարիքների վերհանում

ՀՀ Գեղարքունիքի մարզի դպրոցների հետ համագործակցության ծրագրի շրջանակներում Գավառի պետական համալսարանի ներկայացուցիչները՝ ուսումնագիտական գծով պրոռեկտորը, ֆակուլտետների դեկանները, ամբիոնի վարիչները, որակի ապահովման բաժնի աշխատակիցները, ուսանողները 2024թ. մարտ, ապրիլ, մայիս ամիսներին հանդիպումներ ունեցան Գեղարքունիքի մարզի հանրակրթական դպրոցների բարձր դասարանի աշակերտների և ուսուցիչների հետ: Հանդիպումների ընթացքում, ըստ ցանկության, ուսուցիչների շրջանում իրականացվեց հարցում:

Հարցմանը մասնակցել են Գեղարքունիքի մարզի թվով 10 հանրակրթական դպրոցների 66 ուսուցիչներ /տե՛ս աղյուսակ 1/:

ԳՊՀ որակի ապահովման բաժնի կողմից իրականացված հարցմանը մասնակից հանրակրթական դպրոցների ուսուցիչների վերաբերյալ թվային տվյալներ

Աղյուսակ 1.

Հ/հ	Ուսումնական հաստատության անվանումը	Հարցաթերթը լրացրած ուսուցիչների թիվը
1.	Գավառի Գեորգի Մնացականյանի թիվ 7 մ/դ	14
2.	Լճափի մ/դ	1
3.	Ծովազարդի մ/դ	4
4.	Կարմիրգյուղի թիվ 1 մ/դ	5
5.	Հայրավանքի մ/դ	4
6.	Նորատուսի թիվ 3 մ/դ	9
7.	Նորատուսի թիվ 1 մ/դ	9
8.	Սարուխանի թիվ 2 մ/դ	2
9.	Ճամբարակի ավագ դպրոց	9
10.	Գավառի ավագ դպրոց	9
Ընդամենը		**66**

Հարցմանը մասնակից ուսուցիչները դասավանդում են հետևյալ առարկաները.

Հ/հ	Դասավանդվող առարկան	թիվը
1.	Հայոց լեզու և գրականություն	13
2.	Ռուսաց լեզու	7
3.	Անգլերեն	7
4.	Երկրաչափություն	6

5.	Քիմիա	6
5.	Հանրահաշիվ	5
6.	Պատմություն	5
7.	Ֆիզիկա	4
8.	Տարրական տասարանների դասվար	4
9.	Ինֆորմատիկա	2
10.	Հասարակագիտություն	2
11.	Գերմաներեն	1
12.	Հայ եկեղեցու պատմություն	1
13.	Երգի ուսուցչուհի	1
14.	Շախմատ	1
15.	Նախնական զինվորական պատրաստակամություն	1
16.	Ֆիզկուլտուրա	1
Ընդամենը		**66**

Աղյուսակի տվյալների համաձայն մասնագիտական, մանկավարժական վերապատրաստումների ցանկություն հիմնականում հայտնել են Հայոց լեզու և գրականություն, Ռուսաց լեզու, Անգլերեն լեզու, Երկրաչափություն, Քիմիա, Հանրահաշիվ, Պատմություն առարկաներ դասավանդող ուսուցիչները:

1. **Ի՞նչ թեմայով(ներով) վերապատրաստման դասընթացների կցանկանայիք մասնակցել:**

Այն հարցվողները, ովքեր ցանկություն են հայտնել մասնակցել վերապատրաստման դասընթացներին առաջնահերթություն են տվել հետևյալ ոլորտներին և թեմաներին.

1. **Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը դասավանդման ընթացքում,**
2. **Նախագծային ուսուցում,**
3. **Դասավանդման փոխներգործուն մեթոդներ,**
4. **Իրավունք, պարտավորություն և պատասխանատվություն,**
5. **Ներառական կրթություն,**
6. **Առողջ ապրելակերպ, մարդ և բնություն,**
7. **Պատմության դասավանդման մեթոդիկա,**
8. **Լաբորատոր և գործնական աշխատանքների անցկացում,**

9. Ֆիզիկական սարքերի օգտագործման հմտություններ,
10. Հոգեբանություն,
11. Թվային կրթական գործիքներ,
12. Ներառական կրթություն,
13. Նախագծային ուսուցում,
14. Երաժշտություն,
15. Գործնական և լաբորատոր աշխատանքների կազմակերպում,
16. Վիրտուալ լաբորատոր աշխատանքների կազմակերպում,
17. Գնահատումը ավագ դպրոցում,
18. Հոգեբանական աջակցություն ավագ դպրոցի աշակերտներին,
19. Քիմիայի փորձարարական խնդիրների վերլուծություն,
20. Հոգեբանություն,
21. Մեթոդական հմտություններ,
22. Ֆունկցիայի պարբերականություն, ածանցյալի կիրառություն:

2. Ի՞նչ ձևաչափով կցանկանայիք մասնակցել վերապատրաստմանը:

Գծապատկեր 1.



Հարցվող ուսուցիչների մեծամասնությունը՝ 72,7%-ը, ցանկություն է հայտնել վերապատրաստման դասընթացներին մասնակցել առցանց ձևաչափով, 27,3%-ը՝ ԳՊՀ-ում: Անցանց ձևաչափով վերապատրաստումներին մասնակցության ցանկություն են հայտնել հիմնականում Գավառի թիվ 7 և Գավառի ավագ դպրոցի ուսուցիչները:

3. **Ի՞նչ տևողությամբ կցանկանայիք անցկացվեր վերապատրաստումը:**

Գծապատկեր 1.



Հարցվողների 50 %-ը նշել է 60 րոպե, 43,9 %-ը՝ 45 րոպե, 6,1%-ը՝ 70 րոպե:

4. **Երբևէ մասնակցե՞լ եք ԳՊՀ-ի կողմից կազմակերպված վերապատրաստման դասընթացի կամ սեմինար-քննարկման:**

Գծապատկեր 1.



Հարցվողների 24,2% -ը նշել է, որ մասնակցել է ԳՊՀ-ում կազմակերպված վերապատրաստման դասընթացներին, սեմինար-քննարկումներին, իսկ 75,8% -ը՝ ոչ: «Այո» պատասխան նշվել է հիմնականում Գավառի թիվ 7, Գավառի ավագ դպրոցի, Կարմիրգյուղի թիվ 1 դպրոցների ուսուցիչների կողմից:

5. «Այո» պատասխան նշողները գնահատել են **վերապատրաստման դասընթացի կամ սեմինար-քննարկման արդյունավետությանը հետևյալ կերպ.**

- ✓ գերազանց - 31,3 %,
- ✓ լավ - 43,8 %,
- ✓ բավարար - 25%,
- ✓ անբավարար - 0%:

IV. **Եզրակացություններ և առաջարկություններ.**

Հարցմանը մասնակցել են ՀՀ Գեղարքունիքի մարզի խոշորացված համայնքների թվով 10 միջնակարգ և ավագ դպրոցների 66 ուսուցիչներ:

Ըստ հարցման արդյունքների.

- ✓ Հարցվողների մեծամասնությունը՝ 98%-ը ցանկություն են հայտնել մասնակցել ԳՊՀ-ի կողմից կազմակերպվող վերապատրաստման դասընթացներին, սեմինար-քննարկումներին:
- ✓ Հարցվող ուսուցիչների 72,7 %-ը վերապատրաստումների անցկացման համար նախընտրել են առցանց ձևաչափը՝ հաշվի առնելով բուհից իրենց բնակավայրի հեռավորության խոչընդոտը: Հարցվողների 27,3%-ը նախընտրել է վերապատրաստումներ անցնել անմիջապես ԳՊՀ-ում՝ կարևորևորելով դասընթացավարի և մասնակիցների հետ անմիջական շփումը, լսարանում ազատ հաղորդակցումը, կարծիքների փոխանակումը:
- ✓ Այն հարցվողները, ովքեր ցանկություն են հայտնել մասնակցել վերապատրաստման դասընթացներին առաջնահերթություն են տվել «Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը դասավանդման ընթացքում», «Նախագծային ուսուցում», «Դասավանդման փոխներգործուն մեթոդներ», «Ներառական կրթություն» թեմաներով վերապատրաստումներին և սեմինար-քննարկումներին:
- ✓ Այն ուսուցիչները, ովքեր երբևիցէ ԳՊՀ-ի կողմից կազմակերպված վերապատրաստման դասընթացներին, սեմինար-քննարկումներին մասնակցել են, գնահատել են դրանց վարման արդյունավետությունը և ի

թիվս բարձր գանահատականների, նշվել են նաև բավարար գնահատականներ, ինչը մտահոգիչ է և կարիք ունի ուսումնասիրման։

ԳՊՀ որակի ապահովման բաժինն ուսումնասիրելով հարցման արդյուքներն՝ առաջարկում է.

- ✓ ՀՀ Գեղարքունիքի մարզի դպրոցների հետ համագործակցության ծրագրի շրջանակներում Գավառի պետական համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից կազմակերպվելիք մասնագիտական, մանկավարժական վերապատրաստման դասընթացները դարձնել շարունակական։
- ✓ Առաջիկայում կազմակերպվելիք վերապատրաստման դասընթացների և սեմինար-քննարկումների թեմաները, ձևաչափը, տևողությունը ընտրելիս հաշվի առնել հարցման մասնակից ուսուցիչների առաջարկները։
- ✓ Պարբերաբար թարմացնել Համալսարանի պաշտոնական կայքէջը։ Կայքէջում ավելացնել համապատասխան վերապատրաստումների հարթակը՝ շարունակաբար համալրելով համապատասխան նյութերով։

Հանրակրթական դպրոցների ուսուցիչների մասնագիտական, մանկավարժական որակների բարձրացման ուղղությամբ կարիքների վերհանման հարցման արդյունքների վերլուծությունը, եզրակացություններն ու առաջարկությունները հղվել են համապատասխան ստորաբաժանումներ (ֆակուլտետներ, ամբիոններ), որպեսզի ուսումնասիրվեն, ԳՊՀ ռեկտորատի, ապա գիտական խորհրդի նիստերում, ներկայացվեն համապատասխան լուծումներ և առաջարկություններ, ձեռնարկվեն միջոցներ՝ ուսուցիչների մասնագիտական, մանկավարժական որակների բարձրացման ուղղությամբ, բուհ-դպրոց համագործակցությունն առավել արդյունավետ կազմակերպելու համար։